

գտուի, կ'ըսէ, թէ «գոճի» կամ աղա-
կոյտի մը վրայ է՝ պէտք է նոյն կտորը
նետել, եւ մնացորդը լուանալով գործածել.
Իսկ եթէ «լեսածի» մէջ գտուի, որ միան-
գամայն «ցամաք» լինի, թէ չորս կամ
հինգ լիտր է՝ պէտք է ամբողջովին թա-
փել. իսկ թէ աւելի, նոյնչափը թափել
ու մնացածը գործածել. բայց եթէ «թա-
ցեալ» է աղը, բոլորովին խոտելի է, զի
պղծութիւնը մէջն է թափանցած: Եւ ո-
րովհետեւ ամէն հաւատացեալ բաւական
չէր այսպիսի մանր գննողութեան, անոր
համար գիւղին կամ քաղաքին մէջ կային
վարժ անձինք՝ որ կը կոչուէին այդ գոր-
ծին համար. «Այս, կ'ըսէ, ի գիտեակա-
նաց քննեսցի եւ ճշգրտեսցեն». եւ զորս
կրնանք թէ եկեղեցական եւ թէ աշխար-
հական ենթադրել (Գ): Ի՛նչ աղու տեսա-
րան, նկատել Հայոց իմաստուն վեղարա-
ւորները կամ երիցունքը հաւաքուած աղա-
մանի մը շուրջ. եւ օրինագիրքն ու Մաշ-
տոցն ի ձեռին, — որոց դերն յետոյ պիտի
տեսնենք, — կնճռոտ ճակատներով զբա-
ղած գննելու՝ թէ մկնիկը, մարդկութեան
այդ ահաւոր թշնամին, աղին ո՞ր գղձին
վրայ փչած է իւր շունչը. թէ ո՞րչափ է
աղին զանգուածն ու չորութեան աստի-
ճանը. ճշդել ու վտարել՝ նախանձայոյզ